ցրանցված Ն՝
22.08.2017թ.
կոդ 12417347

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«15» օգոստոսի 2017թ. № 276-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ և 270-րդ հոդվածի 1-ին մասերը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: Սույն հրամանի հավելվածով հաստատված ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվություն ներկայացվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2017 թվականի օգոստոսի 15-ի N 276 – Ն հրամանի

Ձև

| **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**<br>**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | Փաստաթղթի համարը ______________<br>*(լրացվում է հարկային մարմնի կողմից)* |
|---|---|
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը | |
| 2. Հարկ վճարողը | |
| 3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | |
| 4. Հաշվետու ժամանակաշրջանը՝ տարի | |

| Իրականացված գործունեության տեսակը | Իրացման շրջանառությունը, դրամ |
|---|---|
| 5. Արտադրական գործունեություն | |
| 6. Ծառայությունների մատուցում | |
| 7. Աշխատանքների կատարում | |
| 8. Այլ գործունեություն | |
| **9. Ընդամենը** (բացառությամբ արտոնագրային հարկով հարկվող գործունեության՝ տող5+տող6+տող7+տող8) | |
| 10. Արտոնագրային հարկով հարկվող գործունեություն | |
| **11. Ընդամենը** գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն (տող9+տող10) | |

**Եկամուտներն՝ ըստ գործունեության տեսակների**

| **Գործունեության տեսակը (կոդը)** | | | | | | **Տեսակարար կշիռը (%)** |
|---|---|---|---|---|---|---|
| **բաժին** | **հատված** | | **խումբ** | **դաս** | **ենթադաս** | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Եկամուտներն ըստ գործունեության տեսակների աղյուսակում լրացվում են հաշվետու տարում հարկ վճարողի ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման) և այդ տեղեկատվությունը օգտագործվում է վիճակագրության նպատակով: «Գործունեության տեսակը (կոդը)» սյունակում գործունեության տեսակները (կոդերը) լրացվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. N372-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N874-Ն հրամանի հավելվածով հաստատված Տնտեսական գործունեության դասակարգչին համապատասխան (օրինակ՝ C25910 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91, ենթադաս 25.91.0/ համապատասխանում է «Մետաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ:

Պաշտոնատար անձ ______________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը